ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Ս. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Կիկլոպյան կառույցները հնագիտական տեսակետից հետաքրքիր ու կարևորագույն, սակայն մինչև վերջ չուսումնասիրված հուշարձաններ են, որոնցով հարուստ է առանձնապես Հայաստանը։ Դրանցից մի մասի ավերակները պահպանվել են էնեոլիթյան դարաշրջանից։

Նախնադարյան մարդը որպես բնակատեղի ընտրել է բնականից պաշտպանված անմատչելի վայրերը՝ քարաժայռ բարձունքները, անառիկ բլուրներն ու քարայրները։ Քանի դեռ աշխատանքի գործիքները, զենքն ու զինական գործը թույլ էին զարգացած, տոհմատիրական շրջանի մարդկային խմբերը բացառապես օգտվում էին պաշտպանության տեսակետից հարմարավետ բնական պայմաններից, առանց տեղավայրը որոշակի վերափոխության ենթարկելու։ Սակայն հետագայում նրանք կոլեկտիվ ուժերով այդ անմատչելի վայրերում՝ քարաժայռ բարձունքներում, կառուցում են զանազան ամրություններ՝ շրջապատի բնակավայրերով, որոնք կոչվում են կիկլոպյան ամրոց-բնակատեղիներ կամ մեգալիթյան հուշարձաններ։

Կիկլոպյան կառույցները կենսական անհրաժեշտություն են դառնում մանավանդ այն շրջանում, երբ անասունների, արոտավայրերի և կողոպուտի համար մղվող միջտոհմային ու ցեղային կռիվները, ընդհարումները սկսում են ավելի սովորական ու հաճախակի դառնալ։

Հատկապես հաճախակի են դառնում միջցեղային հարձակումները բրոնզի դարաշրջանում, երբ կիկլոպյան կառույցներն Անդրկովկասում դառնում են ոչ միայն պաշտպանական կառուցվածքների տարածված ու գլխավոր ձևը, այլև բնակության հիմնական վայրը։ Բնութագրելով նման շինությունները, նշանավոր հնագետ Բ. Բ. Պիոտրովսկին գրում է. «Ռազմական հաճախակի ընդհարումները բնորոշ էին հասարակության զարգացման բրոնզեդարյան փուլին, որը հաստատում են նաև կիկլոպյան ամրոցները, որոնք հանդիսացել են Անդրկովկասի մի շարք շրջաններում բնակավայրի հիմնական ձև...»[1]։ Խոշոր, անտաշ քարերով, առանց շաղախի կառուցված կիկլոպյան ամրոցները, որոնցով հարուստ են հատկապես Արագածի լանջերը, Սյունիքը, Սևանի ավազանը և Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները, բնորոշել ու նկարագրել են շատ գիտնականներ, որոնց թվում նաև ճարտարապետ-հնագետ Թ. Թորամանյանը։ «...Ապառաժի կտորները,— գրում է Թորամանյանը,— միանգամայն բնականորեն ինքնաբերաբար պայթած վիճակին մեջ դասավորված են պատերուն մեջ. եթե նույնիսկ կարելի լինի շարք անվանել, ավելի միմյանց վրա կուտակված են, քան թե շարված»[2]։

Կիկլոպյան կառույցներով առանձնապես հարուստ է Նոյեմբերյանը, որը հնագիտական տեսակետից չուսումնասիրված շրջաններից է։ Վերջին տարիների ընթացքում մեզ հաջողվել է հայտնաբերել շուրջ 30 այդպիսի կառույցներ։

Նոյեմբերյանի այդ հուշարձանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց մեծ մասը իրրև ամրոց և բնակավայր հիմնադրվել է վաղ մետաղի ժամանակաշրջանում։ Այդ են ապացուցում նրանց հարակից տոհմային գերեզմանոցները և պեղումների միջոցով այնտեղ հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները։

Նոյեմբերյանում մեր հետազոտած շատ բարդ-շեներ հիմնադրվել են մետաղների հանքավայրերի մոտ, որոնք հայտնի են «բովեր» անունով։ Դրանք հանքախորշեր կամ մետաղի ձուլարաններ են՝ հանքամշակման գործիքներով ու մետաղական խարամով։ Այդպիսիք կան Կողբիդ հյուսիս-արևմուտք 44 մ վրա գտնվող «Բովեր» կոչվող հանդամասում, Նոյեմբերյանից հարավ 1,5 կմ վրա գտնվող «Մրաղանց Արեգունի» կոչվող բարձունքում, Ջուջևանի «Արամի բլրում», «Մեծ Գոգդաղի» արևմտյան ստորոտներում, Նոյեմբերյանի «Բովերում», Արտիսի, Լճքաձորի «Կողմաններում» և այլ վայրերում։

---

1 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, էջ 58։

2 Թ. Թորամանյան, Նախաքրիստոնեական հայ ճարտարապետությունը, «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա—Բ, Վաղարշապատ, 1932, էջ 207։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընդհանրապես Հայկական լեռնաշխարհի, այդ թվում Նոյեմբերյանի կիկլոպյան շինությունների իրենց կառուցման ոճով ու նպատակներով ունեն հետևյալ միանման և ընդհանուր գծերը.

1. Կիկլոպյան ամրոցները, որպես կանոն, կառուցվել են շրջապատի վրա իշխող բարձունքներին։

2. Պատնեշները կառուցված են առանց շաղախի, խոշոր անտաշ քարերով։

3. Նրանք գերազանցապես պաշտպանական բնույթ են կրել, կառուցվել են ջրամերձ վայրերում և ունեցել ամրոցում իրենց սեփական քարհանքերը։

4. Այդ կառույցներում հայտնաբերվում են աշխատանքային քարե գործիքների և խեցեղենի մնացորդներ։

5. Նրանք բոլորն էլ ունեն իրենց տոհմային գերեզմանոցները։

Այդ կառույցները, ունենալով ընդհանուր գծեր, տարբերվում են միմյանցից մի շարք առանձնահատկություններով, որոնցից կարելի է նշել հետևյալները.

1. Քարայրուղիներով, միջնաբերդերով ամրոցներ, որոնք ունեն պարսպաներս բնակարաններ։

2. Առանց քարայրուղիների, միջնապարիսպներով ամրոց-բնակատեղիներ, որոնց մի մասը ավելի խոշոր բնակավայրեր են, բնակարանները գտնվում են պարսպի ներսում։

3. Ամրոց-բնակատեղիներ, որոնք ունեն ինչպես ներպարսպային, այնպես էլ արտապարսպային բնակարաններ։

4. Ավելի կոպիտ, տձև խոշոր քարերով պատած, առանց քարայրուղիների ամրոցներ, որոնք համեմատաբար փոքր տարածություններ են գրավում սրագագաթ, քարաժայռ բարձունքների վրա և միայն պաշտպանական բնույթ են կրել, ունեցել են պարսպապուրս, հարակից կացարաններ, որոնք իրենց հերթին ունեցել են պաշտպանական պատեր։ Այդպիսի ամրոցները պարսպի ներսում կացարաններ չունեն։

5. Միջնապարիսպներով և առանց միջնապարիսպների, ուրարտական տիպը հիշեցնող միապարիսպ ամրոցներ, որոնք կառուցված են խորանարդաձև, լավ հարմարեցված երկշար քարերով։ Այդ տիպի պատերն ամրացված են մանր քարերով և խճաքարով։

Սույն հոդվածը չծանրաբեռնելու նպատակով, համառոտակի կանգ կառնենք հիշված ամրոցներից մի քանիսի վրա միայն։ Բնորոշներից մեկն է Արճիսի «Բերդատեղ» կոչվող կիկլոպյան հսկայական ամրոցը, որը գտնվում է Արճիս գյուղի արևելյան ծայրամասում՝ 1,5 կմ հեռավորության վրա։ Ինքը՝ Արճիս գյուղը, տեղադրված է Դեբեդին զուգահեռ ձգվող բարձր լեռնաշղթայի արևմտյան կատարին և շրջանի մնացած գյուղերի համեմատ ունի հարմար ստրատեգիական դիրք։ Լեռնաշղթայի արևելյան կատարը, ուր գտնվում է կիկլոպյան ամրոցի միջնաբերդը, մոտ 1 կմ հեռավորությամբ, վերջանում է հարթավայրով։

Արճիսի «Բերդատեղի» պարիսպները սաստիկ ավերված են։ Նրանք հավանաբար սկսվել են գյուղի արևելյան ծայրամասում գտնվող գերեզմանոցից, ուր կան նաև նախնադարյան թաղումներ։ Սակայն որքան իջնում ենք դեպի արևելք, այնքան նշմարելի են դառնում բլրաշարքի երկու կողմով ձգվող պարսպի պատերը, որոնց շրջակայքում կան դարդարուն և անզարդ, փայլուն և անփայլ սև գույնի ավազախառն կավից պատրաստված, ջարդված խեցեղենի մնացորդներ։

Այդ ձվաձիր հատակագիծ ունեցող ամրոցի պարիսպները ձգվում են արևմուտքից արևելք, կառուցված են խոշոր՝ 1,5—3 մետր բարձրությամբ, կոպիտ անտաշ միաշար քարերից։

Ամրոցի պարիսպներից ու աշտարակներից ավելի կանգուն են մնացել միջնաբերդի հարավային ու արևելյան մասերը։ Միջնաբերդից դեպի հարավ՝ 150 մետր հեռավորության վրա, ամրոցը հատող խճուղուն զուգահեռ նկատելի են ամրոցի ստորին (երրորդ) պարսպի լրիվին ավերված պատերի հետքերը, որոնք ձգվում են մոտ 200 մետր երկարությամբ։ Ամրոցի հարավային ուղղությամբ ձգվող եռաշար պարիսպների կործանման գործում ավերիչ դեր է խաղացել այնտեղ մինչ այժմ գործող քարհանքը։ Գլխավոր պարիսպներից բացի, բլրալանջի հարավային թեքության վրա ձգվում են նաև աղեղնաձև լրացուցիչ փոքր երկարությամբ պարիսպները։

Ի տարբերություն բլրալանջի հարավային պատերի, հյուսիսային պատերի քարերը ավելի խոշոր են, որոնցով կառուցված պարիսպները ավելի խիտ են և բազմաստիճան։

«Բերդատեղի» գագաթը, ուր գտնվում է միջնաբերդը, ավարտվում է մի փոքրիկ հարթությամբ, որի արևելյան կողմում որպես ցիտադելներ վեր են խոյանում բնական քարաժայռերի վրա կառուցված 2 քարայրուղիները։ Նրանցից 30 մետր հեռավորության վրա, արևելյան կողմում, ամրությունն ավարտվում է բարձր պարսպային աշտարականման փականով և աշտարակով (տե՛ս նկ. № 1)։

«Բերդատեղի» ամրոցի միջնաբերդից դեպի արեմուտք՝ 50 մետր հեռավորության վրա, ձգվում են շրջանաձև և քառանկյուն շինությունների (կացարանների) փոս ընկած հետքերը, որոնց տրամագիծը տատանվում է 4—6 մետրի միջև։

Նկ. 1. Արճիսի բերդատեղի կիկլոպյան ամրոցի բերդապարսպի արևելյան փականը։

Դեպի հարավ-արևմուտք՝ մոտ 100 մետր հեռավորության վրա, ամրոցի ստորին (երրորդ) պարսպից դուրս ձգվում է ավելի քան քառորդ հեկտար տարածություն բռնող դամբարանադաշտը։

Դամբարանադաշտում թաղման տարբեր ձևերը, ամրոցի հուշարձանների արտաքին մնացորդները և մեր պեղած դամբարաններում հայտնաբերված նյութերը վկայում են ամրոցի կյանքի տևական գոյության մասին։ Ավելի ուշ շրջանի դամբարանների մի մասը նման է հնագետ Հարություն Մնացականյանի կողմից Գոլովինոյում պեղված քարարկղային տիպի դամբարաններին[3]։

Ամրոցից հայտնաբերվող կավամանների բազմաթիվ կտորներն իրենց նախշերով նման են դամբարաններում հայտնաբերվող կավամաններին։ Պեղված մի շարք դամբարաններից հայտնաբերված, ձեռքով ու դրգի վրա պատրաստված կավե կճուճները, քրեղանները, գավաթները, զանազան այլ կավանոթները, բրոնզե ապարանջանները, մատանիները, ինչպես նաև պաստայից և սարդիոնից բարձր ճաշակով պատրաստած ուլունքները, բրոնզե զենքերը և մի շարք այլ առարկաներն ապացուցում են, որ ամրոցի կյանքը հարատևել է միջին և ուշ բրոնզեդարյան, ինչպես և հետագա ժամանակաշրջանում։

Դամբարանադաշտից պեղված ձեռքով և դրգի վրա պատրաստված կավամանները, ինչպես նաև արևի պաշտամունքին նվիրված զնդաձև սափորները նման են Հ. Մնացականյանի կողմից Գոլովինոյի պեղումներից հայտնաբերված կավամաններին ու սափորներին, որոնք վերագրվում են երկրորդ հազարամյակի վերջին[4]։

Հետազոտությունները ենթադրել են տալիս, որ Արճիսի կիկլոպյան ամրոցի բնակչությունը, որի հիմնական զբաղմունքը եղել է անասնապահությունը, ունեցել է նաև զարգացած խեցեգործություն։

Արճիսի «Բերդատեղի» կիկլոպյան ամրոցի տիպին են պատկանում նաև Ջուջևան գյուղի «Պոպլոզի» և «Արամի» բլուրների վրա գտնվող ամրոցները։ Գյուղի հարավային ծայրին, 500 մետր հեռավորությամբ, իրարից մի ձորակով բաժանվող Բուշվորի և Պոպլոզի գագաթներն ու գյուղի

3 Տե՛ս Հ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Դամբարանների պեղումները Գոլովինո գյուղում, «Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի», հատ. 5, Երևան, 1959։

4 Նույն տեղում, էջ 40—53։

արևելյան ծայրամասով ձգվող «Արամի բլուր» կոչվող գագաթը եռանկյունաձև դասավորված, իրար հանդիպակաց բլուրներ են, որոնց վրա գտնվում են հնագույն բերդ-շենները։ Այդ 3 բերդ-շեներն էլ ունեն իրենց տոհմային դամբարանադաշտերը։ «Գոպլոզի» և «Արամի» ամրությունները քարաբուրգերով, կիկլոպյան պատերով կառուցված ամրոց-բնակատեղիներ են։

«Գոպլոզի» ամրոցի պատերն ավելի խիստ են ավերված և փոքր տարածություն են բռնում, քան Արճիսինը։ Չնայած նրա հյուսիսային պարիսպների հետքերը հաղիվ նկատելի են, սակայն բլրալանջի հարավային ճակատով, ուր գտնվում է ամրոցի քարհանքը, եռապարիսպ ժապավենաձև ձգվող պատաշարերից միայն ստորինի վրա է, որ կանգուն են մնացել առանձին հատվածներ։ Ամրոցի գագաթամերձ պարիսպները շարված են եղել խոշոր ժայռաբեկորներից, իսկ մուտքը հավանաբար բացվելիս է եղել բլրալանջի արևմտյան կողմից, որն ավելի փոքր թեքություն ունի։

«Գոպլոզի» գագաթից 120 մետրի վրա, հյուսիսային ստորոտով հոսում են սառնորակ գետակ և աղբյուր, որոնցից 40 մետրի վրա ձգվում է «Ալեքսի հող» կոչվող նախնադարյան դամբարանադաշտը, ուր կան սալարկղային թաղումներ։ Այստեղ հայտնաբերվել են ոչ միայն բրոնզե, այլև երկաթե զարդեր, այդ թվում՝ առանց զարդաքանդակի երկաթե ապարանջան և մատանի։ Ամրոցի մոտ, 2 հեկտար տարածություն գրավող գագաթամասի հյուսիս-արևելյան հատվածում են գտնվում ամրոցի կացարանների շրջանաձև փոս ընկած հետքերը, որոնցից դեպի հարավ-արևմուտք բարձրանում է ամրոցի քարաբուրգը։ Այդ քարաբուրգը, որ մոտ 30 տարի առաջ զգալիորեն ավերվեց կայծակից, ամրոցի միակ դիտակետն է։ Ամրոցում հանդիպում են բարձր ճաշակով, երկրաչափական պատկերներով պատրաստված սև և կարմրավուն գույնի կավանոթների բեկորներ։

Հնագիտական տեսակետից ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ջուչեան գյուղից 500 մետր հեռավորությամբ՝ արևելյան ծայրամասով ձգվող «Արամի բլրի» վրա գտնվող ամրոցը, որտեղ վերջին ժամանակներս կառուցվել են սի քանի բնակարաններ, պահեստներ և անասնագոմեր։ Սա նույնպես նախորդ 2 ամրոցների նման պարսպից դուրս կացարաններ չի ունեցել։ Ամրոցի միակ քարաբուրգը և միաշար պատերն ավերվել են վերջին տասնամյակներում։ Ամրոցն անմատչելի է, հատկապես հարավային կողմից շրջափակված է բնական և արհեստական ժայռապարիսպներով։ Նրա հյուսիսային մուտքը հատող միակ ճանապարհից հյուսիս՝ մոտ 400 մետր հեռավորության վրա ձգվող հարթավայրում են տեղադրված վաղ միջնադարյան գերեզմանոցը և ավերված վանքը։ Գերեզմանոցի արևելյան եզրին հողի հաստ շերտից հայտնաբերվել են կրաշաղախով և առանց շաղախի բնակարանների պատեր, ինչպես նաև ջրի գունդեր։ Հավանաբար վաղ միջնադարյան այդ բնակավայրը ծագել է «Արամի բլրի» կիկլոպյան ամրոց-բնակատեղից, որը բռնում է 5—6 հեկտար տարածություն։ Ամրոցի հարավային՝ և՛ բնական, և՛ արհեստական խոշոր ապառաժներով ձգվող պարիսպները ավերվել են վերջին տասնամյակների ընթացքում՝ ճանապարհ անցկացնելիս։

Հարավային պարիսպների կողմում ժայռապատ գագաթն ավարտվում է կապույտ գրանիտի քարաժայռերով կտրուկ իջնող զառիթափ թեքությամբ, որի ստորոտով անցնում է խճուղին։ Վերջինիս հարավային եզրով ձգվում են սովխոզի անասնագոմերը, որոնց մոտ գտնվում է ամրոցի նախնադարյան ընդարձակ դամբարանադաշտը։ Ամրոցը լիովին ապահովված է եղել ջրով, որովհետև նրա կենտրոնից մոտ 100-ական մետր հեռավորությամբ՝ արևելյան և արևմտյան ստորոտներով, ձորաբերաններով հոսում են սառնորակ աղբյուրներ։ Ամրոցի կենտրոնական մասում նկատելի են բնակարանների հետքեր հիշեցնող գոգավորություններ ու փոսեր։ Տեղի բնակիչ Վանո Հարությունյանը պատմում է, որ 1929 թ. իրենց բնակարանի հիմքերը փորելու ժամանակ հայտնաբերվել են հին կացարաններ, որոնց երկու կողմը եղել է ժայռակոփ, իսկ մյուս կողմերը՝ կավի ցեխով, տձև, կոպիտ քարերով շարված պատեր։ Այդ կացարաններում հայտնաբերվել են նաև ծածկի կազնու փտած գերանի կտորներ։ Կացարաններից մեկի հատակը սվաղած է եղել շիկահողով։ Նրա պատմելով հարավային բերդապարսպի մոտ հայտնաբերվել է մի դամբարան, որտեղից հանվել են սև գույնի կավե կճուճներ և մարդկային գանգեր։ Ի դեպ, նման թաղումներ կիկլոպյան ամրոցներում հազվագյուտ են, և երևի կատարվել են ամրոցի պաշարման ժամանակ միայն։ «Արամի բլրի» ամրոց-բնակավայրի արևմտյան սահմանն ապահովված է եղել բազմաշար քարապարիսպներով, որ բլրի կենտրոնական լանջամասում ավարտվում են 5-րդ պարսպով։ Ամենաստորին և երկար պարիսպը, որն սկսվում է բլրի հարավ-արևելյան գահավեժ բնական ժայռապատից, ձգվում է ձորակի ափով դեպի հյուսիս 400 մետր երկարությամբ։ Երկրորդ պարիսպը նրանից բաժանվում է 45 մետր միջտարածությամբ, գագաթամերձ 3-րդ և 4-րդ պարիսպների հեռավորությունը միմյանցից կազմում է 20—25-ական մետր, իսկ վերջին, գագաթնային պարիսպը նախավերջին պարսպից բաժանվում է 7 մետր միջտարածությամբ։

Ամրոցի բնակչության բարձր զարգացած մշակույթի մասին շատ բան են վկայում նրա բազմանգակալից ու մեծ տարածություն բռնող դամբարանադաշտի հուշարձանները։ Մեր հետազոտությունների ժամանակ ամրոցից հայտնաբերվեց փոքր գոգավորությամբ, ձվածիր քարե պրիմիտիվ աղորիք և քարե սանդ։ Վերջինս, որի փոսիկն ունի 9 սմ խորություն և 13 սմ տրամագիծ (տե՛ս տախտ. 1, նկ. 21), գտնվեց ամրոցի կենտրոնական մասից, արևելյան ուղղությամբ ձգվող պարսպի մոտից։ Սրանից մոտ 30 մետր հեռավորության վրա գտնվող վարելահողի շերտերից, ուր հավանաբար գտնվել է ամրոցի ձուլարանը, առաջորեն դուրս է գալիս մետաղական խարամ։ Ամենայն հավանականությամբ նման սանդերը օգտագործվելիս են եղել հանքամշակության նպատակով։ Սանդը նման է 1958 թ. Կարմիր բլուրի պեղումներից հայտնաբերված սանդերին, որոնք նկարագրել է պրոֆ. Հ. Ա. Մարտիրոսյանը, բնութագրելով որպես հանքամշակության նպատակով օգտագործվող քարե գործիքներ[5]։

Դամբարանադաշտի հյուսիսային եզրը հատում է ճանապարհը, որի հարթեցման ժամանակ հայտնաբերվեցին մի քանի դամբարաններ։ Մի քանի թաղումներ կան նաև ճանապարհի հյուսիսային եզրում՝ ապառաժ լեռնալանջին։ Սակայն հիմնականում դամբարանադաշտը գտնվում է ճանապարհի տակ՝ հարավային մասում։ Դամբարանադաշտը կենտրոնական մասով ձգվում է շուրջ 200 մետր լայնությամբ՝ հյուսիսից-հարավ, մինչև հարավային ձորափը, իսկ երկարությամբ ձգվում է արևմուտքից դեպի հարավ-արևելք, մոտ 800 մետր երկարությամբ, սովխոզի արևմտյան այգիներով իջնում և շարունակվում է «Մոսեսի հող» կոչվող վայրով և ավարտվում ձորափով։ Այդ դամբարանադաշտը, որն իր մեծությամբ առաջինն է Նոյեմբերյանում, ուշագրավ է և իր թաղման ձևերի բազմազանությամբ։ Ինչպես թաղման ձևերը, այնպես էլ դամբարաններից պեղված նյութական մշակույթի հուշարձանները ապացուցում են այդ դամբարանադաշտի շուրջ երեք-հազարամյա հարատևումը։

Ինչպես շինարարության, այնպես էլ մեր պեղումների ժամանակ հայտնաբերվել են էնեոլիթյան շրջանի սև փայլեցրած ուշագրավ կավե ամաններ, որոնք ըստ պրոֆ. Հ. Մարտիրոսյանի բնորոշման, պատկանում են մ. թ. ա. III հազարամյակի մշակույթին։ Պեղումներից հայտնաբերվել են նաև մ. թ. ա. II և I հազարամյակներին պատկանող այլ հուշարձաններ։ Ուշագրավ են նաև վաղ հայկական շրջանի (VI—III դդ.) մշակույթին պատկանող բազմաթիվ կավանոթները, կճուճները, գավաթները, երկաթյա նիզակները, թրերը և մի շարք այլ առարկաներ։ Ճանապարհաշինարարության ժամանակ այնտեղ հայտնաբերվեցին ավելի ուշ ժամանակաշրջանի թաղումներ, որոնց կավե անոթները լիովին փշրվել էին տրակտորների ծանրության տակ։ Նրանցից Նոյեմբերյանի դպրոցական թանգարանում պահվում են նաև Պարթև Արշակունիների, Միհրդատ II-ի (մ. թ. ա. 123—88) և Օրոնտ I-ի (մ. թ. ա. 57—37) ժամանակաշրջանի արծաթյա դրամները (ըստ դրամագետ Խաչիկ Մուշեղյանի)։ Անասնաշենքերի շինարարության ժամանակ բացվող դամբարաններից հայտնաբերվել են նաև բազմաթիվ բրոնզե իրեր՝ կացիններ, սակրեր, մանգաղներ, գոտիներ և այլն։ Մեր պեղումներից հայտնաբերվել են ականջօղեր, ասեղ, մազակալ, բրոնզե, ինչպես նաև պաստայից, խալցեդոնից պատրաստված բազմաթիվ ուլունքներ և բրոնզե քառագլուխ վիշապի պաշտամունքային զարդ։

Ամրոցների երկրորդ խմբին են պատկանում Արճիսի «Բերդատեղի» ամրոցից մինչև Հաղթանակի սովխոզի հյուսիսային այգիները արևմուտքից-արևելք ձգվող՝ Դերեզի աջափնյա կիկլոպյան շինությունները, որոնք խոշոր, տձև քարերից պատած միապարիսպ ամրոց-բնակատեղիներ են։ Այդ խմբի 4 ամրոցները գտնվում են իրարից 200—600 մետր հեռավորության վրա գտնվող բարձունքներին և տեղացիների կողմից կոչվում են «Շահլամներ»։

Այդ բարձունքները, որոնք ընդհանուր դիրքով և տեսքով միմյանց նման են, երեք կողմից ունեն խիստ զառիթափ ու քարաժայռերով կտրուկ իջնող թեքություններ, իսկ միայն մի կողմից՝ պարանոցով միանում են ընդհանուր հարթությանը, ունենալով թեքակղզու տեսք։ Նրանց գագաթները շրջանաձև, հարթ վարելահողեր են, որոնց տարածությունը տատանվում է 5—10 հեկտարի միջև։ «Շահլամ» կոչվող բարձունքների գագաթային եզրամասերով շրջանաձև ձգվում են սև գույնի բազալտի քարհանքերը, որոնք օգտագործվում են մինչև այժմ, դառնալով ամրոցների պարիսպների կործանման պատճառը։

Այդ ամրոցների կացարանները բացառապես տեղադրված են բուն գագաթներում, պարսպաներս տարածությունների վրա։ Ի տարբերություն նախորդ խմբի ամրոցների, վերջիններս ունեն իրենց միջնապարիսպները և կենտրոններում չունեն քարաբուրգեր։

---

[5] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, էջ 183—184 և աղյուսակ XVIII, 1։

Այդ ամրոցաշարից համեմատարար կանգուն է մնացել IV-ը՝ Հաղթանակի սովխոզի «Շահլամի» ամրոցը, սովխոզից մոտ 1 կմ հեռավորության վրա։ Ամրոցը, որը ընդհանուր դիրքով նման է կոշկի ներբանի, բոլոր կողմերից մի-ապարիսպ է, բացառությամբ համեմատարար թույլ պաշտպանված հարավային կողմի, ուր ձգվում է էռաշար պարիսպը։ Սակայն ամրոցը կենտրոնի մասում ունի իրարից 32 մետր հեռավորությամբ զուգահեռաբար հյուսիսից-հարավ ձգվող երկու միջնապարիսպներ։ 140 մետր երկարությամբ ձգվող այդ երկու միջնապարիսպների պատերը կառուցվել են արհեստական հողաթմբերի վրա, որոնց բարձրությունը հասնում է ավելի քան 2 մետրի։ Ամրոցի միջնաբերդի շուրջ 2 հեկտար տարածության վրա կողբ-կողքի փոված են շրջանաձև և քառանկյունաձև կացարանների փուսերը։

Ամրոցի դամբարանադաշտը, որը բռնում է բավականին մեծ տարածություն, գտնվում է ամրոցի հարավային ստորոտում՝ 300 մետր հեռավորության վրա։ Դամբարանները առանց սալաբարերի, 1,3-ից մինչև 2 մետր խորությամբ թոնրանման թաղումներ են, որոնք լցված են մանր քարերով։ Մեր պեղումների ժամանակ հայտնաբերվել են բրոնզե նետասլաքներ, մատանիներ, ասեղներ, ժանյակներ, ականջօղեր, գեղեցիկ նախշերով փորագրված ապարանջաններ, պաստայից ու խալցեդոնից պատրաստված ուլունքներ։ Ճանապարհաշինարարության ժամանակ հայտնաբերվել են բազմատեսակ չենդանիների բրոնզե ձուլածո արձանիկներ։ Այդ դամբարաններից հայտնաբերված խեցեղենի նախշարվեստը նման է բուն ամրոցից հայտնաբերվող կավե իրերի կտորների նախշարվեստին։

«Շահլամների» ամրոցների կիկլոպյան շինություններից հայտնաբերված քարե հղկված գործիքները, մասնավորապես սանդաթակերը, իրար նման են, նրանց աշխատանքային ծայրերը մաշված են։ Դրանք ողորկ, ձեռքում բռնելու հարմարեցված գործիքներ են և ծառայել են հանքամշակության տարբեր գործողությունների համար (տե՛ս տախտ. 1, նկ. 7, 8, 9, 10, 11)։

Ավելի հետաքրքիր և ժամանակաշրջանը բնութագրող հուշարձաններ են հայտնաբերվել նաև Մեծ կամ Առաջին «Շահլամիչ դամբարանադաշտից, վերջին երկու տարում Այրումի պահածոների գործարանը և ավանի մի շարք բնակելի շենքերը կառուցելիս։ Այդ նյութերի մի մասը պահվում է Այրումի դպրոցական անկյուն-թանգարանում։

«Մեծ «Շահլամի» սարալանջում հեղեղատների շնորհիվ բացվեց հողի կուրծքը, որտեղից հայտնաբերվեց բազալտե քարից պատրաստված մի սանդ, որի բարձրությունը հասնում է 23 սմ-ի, իսկ տրամագիծը՝ 19 սմ-ի, կոնաձև փոսիկի խորությունը հասնում է 8 սմ-ի (տե՛ս տախտակ 1, նկ. № 12)։ Սանդի շուրջը գտնվող ավազաքարերն իրենց մեջ պարունակում են պղինձ և երկաթ։ Մեծ կամ Առաջին «Շահլամին» պատկանող դամբարանադաշտից շինարարության ժամանակ հայտնաբերվել են քարե մուրճը, քարե և կավե շերեփներ, որոնք նույնպես հավանաբար օգտագործվել են հանքամշակության և մետաղամշակության տեխնիկայի մեջ։

Այրումի շրջանում գտնվող, Դերեգի աջափնյա հինգ բարձունքների վրա կառուցված կիկլոպյան բնակավայրերի բնակչությունը, այսպիսով, զարգացած անասնապահությունից զատ, ունեցել է նաև զարգացած մետաղամշակություն։ Այդ ամրոցների կառուցվածքի ձևի և հուշարձանների ընդհանուր նմանությունը ենթադրել է տալիս նաև, որ այդ բարձունքներում կառուցված կիկլոպյան ամրոցների շրջանում ապրելիս է եղել մեկ ցեղ։

Այրում ավանից բացված դամբարաններից հայտնաբերված հուշարձանները, խեցեգործության նմուշները հաստատում են նաև այդ ամրոցների հարատևության մասին։ Ուշագրավ են հատկապես բրոնզե ղրերը, մանգաղը, նիզակները և կացինները։ Բրոնզե կացիններից մեկը պատկանում է XXV—XXIV դարերին, իսկ մյուսները՝ XII—XI դարերին (տե՛ս տախտ. 1, նկ. 1, 2, 13, 14)։

Նման կառույցների խմբին է պատկանում նաև Նոյեմբերյանի «Բերդաղ» կոչվող ամրոցը, որը գտնվում է շրջկենտրոնից հյուսիս-արևելյան ուղղությամբ՝ 3 կմ հեռավորության վրա։ Ամրոցը գտնվում է շրջապատի վրա իշխող մի բարձր մենագագաթի վրա, որի միջպարսպային հարթ տարածությունը ավելի քան երկու հեկտար է։ Նրա շրջանաձև ձգվող մենապարսպի պարագիծը հասնում է մոտ 500 ոտնաչափի, իսկ տրամագիծը՝ 155 մետրի։ Ամրոցի կենտրոնում, 120 մ երկարությամբ ձգվում են երկու միջնապարիսպները։ Ամրոցը ընդհանուր կառուցվածքով և ոճով նման է «Շահլամների» ամրոցներին, ինչպես նաև Մարտունու շրջանի «Սանդարի» կիկլոպյան ամրոցին[6]։

---

[6] Տե՛ս Գ. Հ. Մ ի ք ա յ ե լ յ ա ն, Մարտունու շրջանի կիկլոպյան ամրոցները, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3։



Surfaunuly 1.

Նրա պարիսպների խորանարդաձև, սրբաշ չափով հարթեցված քարերը մոտեցված են իրար կից, երկշար ձևով, իսկ այդ շարերի միջև լցված են մանր քարեր և խիճ։ Դրանից կարելի է եզրակացնել, որ այն նախորդներից ավելի ուշ ժամանակաշրջանի կառույց է։

Նոյեմբերյանի «Բերդաղի» ամրոցից 2 կմ դեպի արևմուտք, Կողբի և Նոյեմբերյանի միջև գտնվող բարձրաբերձ՝ Կողբի «Բերդաղ», Նոյեմբերյանի «Ջորամերուկ» և «Ղարսոնց գոլ» դաշտերի վրա նույնպես կան կիկլոպյան ամրոցներ, որոնք մի ընդհանուր խմբավորում են կազմում։

Կողբի «Բերդաղի» ձվածիր տեսք ունեցող բերդ-շենի հարթ տարածությունը բռնում է ավելի քան 1,5 հեկտար, իսկ բերդապարսպի պարագիծը հասնում է մոտ 450 մ-ի։ Բարձունքի հարթ տարածության վրա ոչ միայն նկատելի են կացարանների փոսերը, այլև այնտեղից հայտնաբերվել են թաղված խոշոր կարասներ։ Ամրոցի քարհանքը գտնվում է հյուսիս-արևելյան զառիթափ գագաթամերձ տարածության վրա։ Նրա թեք սարալանջի արևելյան և հյուսիս-արևելյան մասով ձգվում է եռաշար պարիսպ, իսկ արևմտյան մասով՝ երկշար պարիսպ։ Երկշար պարսպով է շրջափակված եղել նաև ամրոցի հարավային մասը, որտեղից հավանաբար բացվել է ամրոցի մուտքը։ Ամրոցը չունի քարաբուրդ և միջնապարիսպներ։ Ի տարբերություն ամրոցի կիկլոպյան մյուս պատաշարերի, նրա արևելյան պատաշարերը նման են Նոյեմբերյանի «Բերդաղի» պատաշարերին։ «Ջորամերուկի» ամրոցի ընդհանուր դիրքը ձվածիր է, պարագիծը երկարությամբ բռնում է մոտ 500 մետր, իսկ լայնությունը չի անցնում 100 մետրից։ Հարավային հիմնական պարսպից բացի, մոտ 40 մետր տարածության վրա, զուգահեռ ձգվում է լրացուցիչ մի երկար պատ ևս, իսկ հյուսիսային մասի պաշտպանական բերդապարիսպը, որը անցնում է համեմատաբար հարթ տարածության վրա կառուցված արհեստական հողաթմբով, ունի 2 մ բարձրություն և 300 մետր երկարություն։

Կողբի «Բերդաղի» բերդ-շենից արևելք՝ 300 մ հեռավորության վրա է գտնվում «Ղարսոնց գոլ» կոչվող ամրոց-բնակատեղին, որից 150 մ հարավ-արևելք ձգվում է Հարսնաքարի լայնատարած հարթավայրը, ուր գտնվում է վերոհիշյալ բերդ-շեների դամբարանադաշտը։ Նրա կիկլոպյան պարիսպը լրիվին ավերվել է հողամշակության, բնակարանաշինարարության և ճանապարհաշինարարության հետևանքով։ Սակայն նկատելի է, որ նրա հարավ-արևելյան սարալանջով ժապավենաձև ձգված են եղել նրա 3 պատերը։ Այնտեղից հայտնաբերվող կավամանների կտորները, իրենց պատրաստման ոճով, որակով ու նախշազարդերով նման են իր դամբարանադաշտից հայտնաբերված կավանոթներին։

Մեր կողմից այդ դամբարանադաշտից պեղված 22 դամբարաններից հայտնաբերված նյութական հուշարձանները պատմում են ոչ միայն այդ ամրոց-բնակավայրի բնակիչների բարձր մշակույթի, այլև նրա՝ որպես բնակավայրի տևական գոյության մասին։ Այդ դամբարանադաշտի միմյանցից 2—4 մետր հեռավորության վրա գտնվող դամբարանների խորությունը հասնում է մինչև 2 մետրի, երկարությունը տատանվում է 1,2-ից մինչև 1,6 սմ, իսկ լայնությունը՝ 80—90 սմ։ Թաղումները կատարված են հիմնականում հյուսիսից հարավ, կողերից ունեն երկու սալեր և ծածկված են 1,5—2 մետրանոց խոշոր սալերով, իսկ որոշ դամբարաններ էլ երեք կողմից շրջապատված են սալերով։ Դիակները հիմնականում թաղված են կուչ եկած վիճակում, իսկ առանձին փոքրաթիվ դամբարաններում թաղումները կատարված են դիակիզված։ Ամրոցի բնակչությունը ունեցել է զուրգի վրա, Բարձր ճաշակով պատրաստված խեցեղեն, դեղնավունցապես սև գույնի։ Կավանոթների մի մասը ունի հարուստ վերադիր զարդեր, որոնք պատկերում են օձերի, խոյերի, ձիերի և այլ կենդանիների գլուխներ։ Նրանց շարքում ուշագրավ է նաև մի կավանոթ, որի վրա պատկերված է երկու լծված ձի, իսկ կավանոթի մյուս կողմին քանդակված է մարտակառք՝ 2 ձիերով (տե՛ս նկ. 2). Կան և կենդանակերպ, այդ թվում և թռչնակերպ կավանոթներ (տե՛ս նկ. 3), բրոնզե մարտական կացիններ, մանգաղներ, դաշույններ, նիզակներ և այլ զենքեր (տե՛ս տախտ. 1, նկ. 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20)։ Որոշ դամբարաններում հայտնաբերվել են նաև նետեր, բրոնզե երախակալներով դաշույններ և այլ զենքեր։ Դամբարանադաշտում հայտնաբերված բրոնզե ասեղները, ճարմանդները, սարդիոնից, պաստայից և սուրմայից պատրաստված ուլունքները, բազմատեսակ նախշազարդ ապարանջանները, ականջօղերը, պանդոկները, բրոնզե գոտիները և այլ հուշարձաններ, որոնք հնագետ պրոֆ. Հ. Ա. Մարտիրոսյանի բնորոշմամբ վերաբերում են XIV—XI դարերին, ապացուցում են, որ այդ ամրոցների բնակչությունը ունեցել է բարձր զարգացած կուլտուրա։

Կիկլոպյան կառույցների երրորդ խմբին են պատկանում Կողմանի և Բերդագյուղի (Ղալաքենդի) ամրոցները, որոնք ավելի մեծ բնակատեղիներ են։ Ի տարբերություն վերոհիշյալ բերդ-շեների, վերջիններս ունեն ինչպես իրենց պարսպները, այնպես էլ արտապարսպային կացարանները։

Նկ. 2։

Նկ. 3։

Կողմանի բերդատեղի ամրոց-բնակավայրը գտնվում է արևելքից-արեմուտք ձգվող մեկ ուղղության վրա գտնվող, իրարից երկուական կմ հեռավորության վրա Շղալի նավի, Լոռու, Կողմանի և Ծղիշի գագուկի ամրոցների միջև։ Նա ունի պաշտպանական հրաշալի բնական պայմաններ. երեք կողմերը զառիթափ ՝ թեք սարալանջեր են և հարթ տարածությամբ միանում են միայն հարավային հատվածում, ուր գտնվում է ամրոցի տոհմային դամբարանադաշտը։ Բլրի գագաթի ձվածիր հարթության վրա, հարավից-հյուսիս՝ շուրջ 400 մետր երկարությամբ և 140 մետր լայնությամբ տարածվում են կացարանները։ Ամրոցի արևելյան և արևմտյան արտապարսպային բնակարանափոսերից հայտնաբերվող խեցեգործական նմուշները նման են ներպարսպայինի մնացորդներին։ Հավանաբար արտապարսպային բնակարանները կառուցվել են ավելի ուշ, երբ արդեն բուն բերդաշենում այլևս բնակարան կառուցելու տեղ չի եղել։

Ամրոցի կենտրոնական մասում ավելի լավ են պահպանված առանց կրային շաղախի, ոչ մեծ քարերով, ուղղանկյունաձև կառուցված երկու մետր բարձրությամբ պատերը, որոնք գրեթե կպած են միմյանց կամ գտնվում են ընդամենը 2-ական մետր հեռավորության վրա։ Կենտրոնական մասում համեմատաբար կանգուն են մնացել 15 կացարաններ, որոնց պատերի երկարությունը հասնում է 11, իսկ լայնությունը՝ 6 մետրի։ Ամրոցի պատերից միայն հարավային մասում են պահպանվել առանձին հատվածներ։ Նրա բնակչությունը օգտվել է հյուսիս-արևմտյան մասում, 150 մետր հեռավորության վրա գտնվող աղբյուրից։ Ամրոց-բնակատեղի տոհմային դամբարանադաշտում թաղման տարբեր ձևերը, բնակարանատեղիներից հայտնաբերվող քարե հղկված գործիքները, բարձր ճաշակով պատրաստված կավամանների բազմաթիվ կտորները, մետաղային շլաքը ենթադրել են տալիս նրա՝ որպես գործող բնակավայրի երկարատև գոյության մասին։

Այդ տիպի ամրոցախմբի հաջորդ հուշարձանը՝ Բերդագյուղի քաղաքաբերդը գտնվում է Նոյեմբերյանից 15 և Գոմշավար բնակավայրից 4 կմ հեռավորության վրա, հարավ-արևմտյան ուղղությամբ՝ Աքսիբարա կամ Ջայղոշան գետի ձախ ափին։ Նա շրջանի հնագույն ամրոց-բնակավայրերից ամենականդունն ու հարմարավետն է, բնակարանները դասավորված են ինչպես պարսպի ներսում, այնպես էլ դրսում. նման է Կողմանի ամրոցին, թեև վերջինս բռնում է ավելի մեծ տարածություն։

Շուրջ 5 հեկտար տարածություն բռնող ամրոց-բնակատեղիի պատերը, որոնց բարձրությունը հասնում է 5—7 մետրի, պատված են խոշոր, մինչև 3—4 մետր բարձրությամբ, հաստ կոպիտ քարերով, որոնց որոշ ձև է տրված։ Բերդապարիսպներն ունեն իրենց դիտակետերը քարամեջ նեղ ու երկար անցքեր, որոնց ներքևում կան քարե նստարաններ (գուցե պահապանների համար)։

Ամրոցի կացարանների պատերը հիշեցնում են վաղագույն շրջանի կացարանների առանց շաղախի պատերը։ Սակայն որոշ բնակարաններ, ինչպես նաև կենտրոնում գտնվող աղյուսածածկ տանիքով եկեղեցին, հիշեցնում են ավելի ուշ ժամանակաշրջանի կառույցների ոճը։ Այս ամրոցում բնակչություն եղել է նաև հետագա շրջանում։

Ամրոցամերձ դամբարանադաշտը, նախնադարյան և վաղ քրիստոնեական շրջանի գերեզմաններով, թաղման իր բազմազան ձևերով, բազմադարյան այդ ամրոց-բնակատեղիի հարատև գոյության և նրանում անընդմեջ ապրող բնակչության լավագույն վկան է։

Կիկլոպյան կառույցների հաջորդ խումբը կրել է միայն պաշտպանական բնույթ՝ հարակից բնակավայրերի համար։

Նման տիպի կիկլոպյան ամրոցները, որոնք Նոյեմբերյանում ամենափոքր խումբն են կազմում, կառուցված են սրադաղաթ, բարձրարերձ, քարաժայռ բլուրների վրա, որոնց դաղաթները չունեն բնակարանների համար հարմար տարածություն և շրջափակված են բազալտե խոշոր քարաժայռերով, որոնք կիկլոպյան պատերի միակ հիմքն են։ Նման ամրոցների ներքեզրյա մասում՝ բլրալանջով բոլորաձև տեղ են բռնել նախնադարյան բնակիչների կացարանները, որոնց բնակիչները թշնամական տոհմերի հարձակման և զանազան վտանգների դեպքում իրենց անասունն ու ինչքը պատսպարում էին բուն ամրոցում։ Բնակիչները անձև, խոշոր քարերով պատած պարիսպների ներսը դարսում էին ոչ մեծ չափերի քարեր՝ թշնամիների դեմ գլորելու և նետելու համար։

Այդ ամրոցախմբին են պատկանում Շավարշավան գյուղի Շորաղբրի դաշի և Բաղանիսի գյուղի Հարսնաքարի կիկլոպյան կառույցները։ Վերջինս գտնվում է գյուղի հարավային մասում՝ 1,5 կմ վեր ձգվող Հարսնաքարի բարձունքի վրա և ունի պաշտպանության համար հիանալի, իսկ շրջապատի նկատմամբ բացառիկ իշխող դիրք։ Նրա սուր դաղաթը եզրափակված է բազալտե ճեղքվող քարաժայռերով։ Բացի միջնաբերդյան կիկլոպյան ամրոցից, հուշարձանն ունեցել է կացարանները շրջափակող, ոչ մեծ քարերով պատրաստած պատեր՝ հյուսիսային հատվածում երկպարիսպ, իսկ հարավայինում՝ եռապարիսպ։

Ամրոցի դաղաթից ցած՝ 50 մետր հեռավորության վրա, բարձունքի սարալանջով ժապավենաձև ձգվում է 30—40 մետր լայնությամբ գոգավորություն, ուր տեղավորված են եղել կացարանները։ Այդ կացարանների հարավային մասում, ուր վերջերս ճանապարհ է կառուցվել քար տեղափոխելու համար, բացվել են տոհմատիրական շրջանի օջախներ, որտեղից հայտնաբերվել են ձեռքով պատրաստած, սև գույնի կավանոթների կտորներ, ինչպես նաև կայծաքարից գայլիկոն և սղոցաձև գործիք, որոնք հետագա ուսումնասիրության կարիք են զգում աշխատանքի մեջ նրանց կատարած դերի տեսակետից։

Նմանատիպ կառույցներից է նաև Շավարշավանից 2 կմ-ի վրա, արևելքում գտնվող «Շորաղբրի դաշ» կոչվող՝ իրար կպած երկու գագաթների վրա կառուցված կիկլոպյան շենը։ Դագաթը շրջափակված է բնական քարաժայռերով, որոնց մի մասը ծածկված է արհեստական ժայռաշեն պարիսպներով։ Ամրոցի հարակից բնակավայրը, որը գտնվում է բարձունքի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան սարալանջերում, բռնում է հսկայական տարածություն, այստեղ գետնի մակերևույթով տարածվում են ձեռքով պատրաստած սև, գորշ կարմրագույն և մոխրագույն կավանոթների կտորներ։ Ամրոցի բնակչությունը օգտվել է բարձունքի արևելյան և արևմտյան ստորոտներով հոսող աղբյուրներից։ Ամրոցին հարակից տոհմային դամբարանադաշտը ձգվում է բարձունքի հյուսիսային ստորոտով և հյուսիսային մասում ընդհուպ մոտենում է բոլորաձև թաղումներով մի այլ դամբարանադաշտի, որը պատկանում է նրանից արևմուտք՝ 300 մետրի վրա գտնվող «Աչնի քարեր» կոչվող կիկլոպաշենին։

Մի քանի կիկլոպյան ամրոցներ հնագիտական տեսակետից հետաքրքիր են իրենց վաղ մետաղաձուլական հարմարանքներով։ Վերը նշված Չուչևան գյուղի «Արամի բլրի» ամրոց-բնակավայրից բացի, իրենց բովերն են ունեցել Նոյեմբերյանի «Մրաղանց Արեգունի» և Կողբի «Կալերի սոնի» կոչվող բարձունքներում գտնվող ամրոցները։ Վերջինս գտնվում է Կողբից հյուսիս-արևմուտք՝ 4 կմ հեռավորության վրա, ուր հայտնաբերվում է մետաղական խարամ։ Նրանից հեռու չեն Կողբի «Բովերը», ուր նկատելի են ոչ միայն հնագույն հանքախորշերը, այլև կավից ծեփած հաստ պատերով ձուլարանների հետքերը։ Մրաղանց Արեգունին շրջկենտրոնի հանդիպակաց բլրաշարի ամենաբարձր գագաթն է։ Թեպետ այդ բարձունքի անանցանելի մացառուտները հնարավորություն չեն տալիս ուսումնասիրելու նրա արևելյան և հարավային բերդապարիսպները, սակայն նկատելի են բարձունքի արևմտյան բլրալանջով ձգվող պարիսպները, որ լիովին ավերված են։ Բարձունքի կենտրոնից արևմուտք՝ 50 մետր հեռավորության վրա են գտնվում ամրոցի հանքախորշերը, որի հսկաառակ հատվածում՝ 100 մետր հեռավորության վրա գտնվող փոքրիկ գոգավորություններին նկատելի են բնակարանների փոսատեղերը, որտեղից հայտնաբերվել են բրոնզե մատանի, ապարանջան, սև գույնի փոքրիկ կճուճներ ու նրանց բազմաթիվ կտորներ։ Նույն կացարանատեղերից հայտնաբերվել են մետաղական շլաք, ինչպես նաև հանքամշակման քարե գործիքներ։

Լեռան հյուսիսային ստորոտում, գյուղը այդ բլրաշարքից բաժանող գետակի երկարությամբ մեր կողմից հայտնաբերված հանքաքարերի քիմիական անալիզը հաստատում է, որ շուրջ 2 կմ-ի վրա ձգվում է երկաթահանքի մեծ շերտ։ Գյուղի կենտրոնական մասից հարավ՝ գետակից 50 մետրի վրա հողի արտաքին շերտից 1,5 մետր խորությամբ, իրարից 3—5 մետր հեռավորության

վրա գտնվում են թոնրաձև, թրծած կավի հաստ շերտով պատված փոսեր, հավանաբար ձուլարաններ, որոնց հետագա ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում։

Նոյեմբերյանում, ինչպես նաև Հայաստանի մի շարք շրջաններում կիկլոպյան կառույցների ուսումնասիրություններն ու հետազոտություններն այն եզրակացության են հանգեցնում, որ կիկլոպյան ամրոցները հիմնականում հարատև գործող տոհմա-ցեղային ամրոց-բնակավայրեր են եղել։ Այդ են ապացուցում նրանց հարակից տոհմային դամբարանագաշտերը, նրանցում, ինչպես նաև ամրոցային կառույցներից հայտնաբերվող նյութական մշակույթի մնացորդները։ Իրավացի չէ պրոֆ. Խ. Սամուելյանը, որը հակառակն է պնդում։ Հենվելով գերմանացի հնագետ Լեների ոչ ճիշտ տեսակետի, ինչպես նաև Ղանլիջայի կիկլոպյան ամրություններում Ի. Իվանովսկու կողմից պեղումների ժամանակ հնագիտական իրեր չհայտնաբերելու փաստի վրա, նա գրում է. «Իրոք այդ կիկլոպյան ամրությունները բնակելի չեն եղել և միայն պարբերաբար ծառայել են արտաքին հարձակումներից պաշտպանվելու դեպքերում, դա բացահայտ է հիշյալ կառույցների մեջ պարփակված հողի աղքատ կուլտուրական շերտից, ուր շատ քիչ են հայտնաբերվում հնագիտական իրերը»։

Ջժխտելով, որ կիկլոպյան ամրոցների մի որոշ մասը, իրոք, պաշտպանական կետեր են հանդիսացել շրջակա բնակավայրերի ցեղերի ու տոհմերի համար, պետք է նշել, որ կիկլոպյան ամրոցները հիմնականում վաղագույն շրջանի մնայուն բնակատեղիներ են, որոնց մեջ ապրող բնակչությունը, հակառակ որոշ հնագետների կարծիքի, վարել է նստակյաց կյանք, զբաղվել է անասնապահությամբ, երկրագործությամբ և մետաղամշակությամբ։

Նոյեմբերյանի կիկլոպյան կառույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք իրենց տեղադրությամբ և աշխարհագրական դիրքով բաժանվում են առանձին խմբերի և հավանաբար եղել են տարբեր ցեղերի բնակավայրեր։

Դրանցից հատկանշական է Այրումի խումբը, որի մեջ ընդգրկվում են Դեբեդի աջափնյա կառույցները, այդ թվում Արճիսի, Պտղավանի, չորս Շահլամների ամրոցները։ Մյուս խմբի մեջ են մտնում Նոյեմբերյանի և Կողբի շրջակայքի ամրոցները և երրորդի մեջ՝ Ջուչևանի շրջակայքի կառույցները։ Այդ ամրոցները կառուցվել են հանքավայրերին մոտ, ունեցել են իրենց հանքամշակության և մետաղամշակության օբյեկտները, մի բան, որ հատկանշական է եղել Անդրկովկասի համար։ Սակայն խոսելով այդ մասին, Բ. Բ. Պիոտրովսկին գրում է. «...Այդ ժամանակաշրջանի մետաղագործությունը սերտորեն կապված է եղել հումքի բազայի, լեռնային շրջանների հանքավայրերի հետ, որի պատճառով էլ մետաղամշակության արհեստի հախուռն վերելքը կապված էր անասնապահական ցեղերի հետ»։

Ապացույցները խոսում են այն մասին, որ Անդրկովկասում կիկլոպյան կառույցները, պարսպապատված բնակավայրերը կառուցվել են հիմնականում լեռնային շրջաններում. այստեղ բնակավայրերը ավելի խիտ են եղել, որովհետև ինչպես էնեոլիթի, այնպես էլ բրոնզի դարաշրջաններում միջտոհմային ու ցեղային հարձակումներից պաշտպանվելու և բնապաշտպանական լավագույն պայմանների տեսակետից լեռնային շրջաններն ավելի նպաստավոր էին։

Ճիշտ չէր լինի ենթադրել, թե իբր կիկլոպյան կառույցներում, հողի աղքատ կուլտուրական շերտում բնակչությունը չէր կարող զբաղվել անասնապահությամբ և երկրագործությամբ։ Պետք է ենթադրել, որ վերոհիշյալ դարաշրջաններում կիկլոպյան ամրոցների բնակչությունը երկրագործությամբ և անասնապահությամբ զբաղվել է ամրոցամերձ հողատարածություններում։ Չնայած դրանց զգալի մասը թեք վայրեր են, սակայն նրանք պակաս հարմար չէին իր ժամանակաշրջանի թեթև արորներով հերկելու համար։ Ի վերջո, վերոհիշյալ դարաշրջաններում երկրագործության համար պետք չէին մեծ հողատարածություններ երկրագործական արտադրական գործիքների թույլ զարգացման և տնտեսության մեջ անասնապահության ճյուղի ավելի վճռող նշանակության պատճառով։

---

7 Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. 1, Երևան, 1941, էջ 41։

8 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, էջ 54։